ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavar.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 5-Ա

1. Գավառ համայնքի ղեկավարի երդման արարողության մասին

Գավառ համայնքի ավագանու անդամներից ավագ անդամ Օնիկ Դանոյանը վարելով ավագանու նիստը՝ Գ. Մարտիրոսյանին հրավիրում է ընթերցելու երդման տեքստը.

Գուրգեն Մարտիրոսյանը ընթերցում է երդման հետևյալ տեքստը.

«Ստանձնելով Գավառ համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.

Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:

Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին»:

Հնչում է ՀՀ օրհներգը, որից հետո Գուրգեն Երվանդի Մարտիրոսյանը ստորագրում է երդման տեքստը, որը ի պահ է տրվում Գավառի համայնքապետարանի աշխատակազմին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1. մասով, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1. Ընդունել ի գիտություն Գուրգեն Երվանդի Մարտիրոսյանի երդմամբ համայնքի ղեկավարի լիազորությունների ստանձնումը:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԱՐԵՎՇԱՏՅԱՆ ԼԱՎՐԻԿ

ԲԱԲԻՆՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ

ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ

ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

Համայնքի ղեկավար՝ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ